Հաստատում եմ՝ Լ. Պետրոսյան

# Դասղեկի աշխատանքային պլան

## VII « Ա» դասարան

Դասղեկ՝ Սոնա Գևորգյան

## Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

### Ուսումնական տարվա սկզբին

1. Կազմել աշակերտների անվանա ցանկը
2. Կազմակերպել դասագրքերի բաշխում
3. Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը
4. Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին
5. Աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն (մանկավարժահոգեբանական ախտորոշում)
6. Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների՝(փոխհարաբերություններ աշակերտների միջև, աշակերտների և ուսուցիչների միջև, ներդասարանական, միջդասարանական փոխհարաբերություններ) վերլուծություն, համակարգում, կարգավորում
7. Սովորողների սոցիալական պաշտպանություն, (ցանկալի է սոցիալական մանկավարժի հետ համատեղ)
8. Աշխատանք ծնողների հետ
9. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան

## Ամենօրյա աշխատանք

1.Էլեկտրոնային մատյանում նշել բացակայությունները

2.Հետևել կարգապահությանը

3.Հետևել հերթապահությանը դասարանում

## Ամենշաբաթյա աշխատանքներ

1. Անցկացնել դասղեկի ժամեր
2. Վերահսկել դասամատյանի վարումն այլ ուսուցիչների կողմից
3. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

## Ամենամյա աշխատանքներ

1. Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացներին
2. Օգնել դասարանական խորհրդին՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը
3. Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում
4. Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում
5. Հետևել դասագրքերի պահպանմանը
6. Վարել ծնողական ժողովներ
7. Աջակցել, ուղղորդել աշակերտական ակտիվի աշխատանքները

### Կիսամյակի ավարտին

- Աշակերտների կիսամյակների ամփոփում
- Կազմել դասարանի կրթադաստիարակչական արդյունքների ամփոփում
- Ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ

## Դասղեկի պաշտոնային պարտականություններ

Դասարանի ղեկավարը դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

• մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության անառանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը

• նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը. անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն

• իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն

• կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ

• դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը

## ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**1.Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)** VII ա դասարանում սովորում են 27 աշակերտ՝ 13 տղա, 14 աղջիկ: Դսարանում կան 3 գերազանցիկներ՝ Հովակիմյան Ալեն Համլետի, Ղարիբյան Լյուսի Ռոմիկի, Սամվելյան Ռոբերտ Մինասի: Նրանք բոլորն էլ պարտաճանաչ աշակերտներ են: Դասարանում իշխում է համերաշխությունը, հարգանքը միմյանց և ուսուցիչների հանդեպ:

**2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**

1.Ուշադրություն դարձնել դասարանական կոլեկտիվի համախմբմանը:

2. Ապահովել անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ող- ջունող և ներուժը բացահայտող հոգեբանա- մանկավարժական միջավայր:

3. Ձևավորել բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերություններ սովորողների, սովորողների և մանկավարժների միջև:

4. Ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ:

5. Դաստիարակել հայրենասիրություն, հարգանք մեծերի հանդեպ:

6. Ի հայտ բերել աշակերտների նախասիրությունները և ընդգրկել նրանց հասարակական աշխատանքներում:

7. Օգնել աշակերտներին զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները,ինչը կնպաստի նրանց՝ հետագայում հասարակության մեջ արդյունավետ ինտեգրմանը:

## 3.Հայեցի դաստիարակություն

**3.1 Հոգևոր դաստիարակություն:** Անհրաժեշտ է ձևավորել անձ, ով գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների , ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, գիտակցի,որ գիտությունը, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամա- նակակից աշխարհում:

**3.2 Գեղագիտական դաստիարակություն** Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ: Աշակերտը պետք է կարևորի գե- ղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը: Կազմակերպել էքըս- կուրսիաներ, որոնք կնպաստեն աշակերտների գեղագիտական դաստիարակությանը:

**3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն** Ձևավորել քաղաքացի, ով հարգի Հայաստանի պետական խորհրդանիշ.-ը, լինի հայրե- նասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրա- Ժեշտությունը:

**3.4 Ֆիզիկական դաստիարակություն** Կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ: Աշակերտը պետք է մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը:

**3.5 Աշխատանքային դաստիարակություն** Ձևավորել անձ, ով դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը:

**3.6 Բնապահպանական դաստիարակություն** Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ: Ձևավորել անձ, ով գիտակցի բնության պահպանման, շրջակա միջավայրի չաղտոտման կարևորությունը:

**3.7 Դպրոց – ընտանիք կապը** Սերտ կապ պահպանել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել դպրոցի աշխատանքներին: Աշակերտը պետք է գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, դրսևորի արժանավայել պահվածք, գիտակցի ծնողների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը:

7-րդ « Ա» ԴԱՍԱՐԱՆ

**Դասղեկի ժամեր**

**1-ին կիսամյակ**

| Դասի համարը | Դասի թեման | Ժամկետ | Կատարողներ |
|---|---|---|---|
| 1. | Գիտելիքի օր: Նոր ուստարվա անելիքների ծրագրում: | I շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 2. | Ինչպես անցկացրեցի ամառային արձակուրդները, ինչ նոր վայրեր բացահայտեցի ինձ համար | II շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 3 | Դպրոցի կանոնադրություն, աշակերտների իրավունքները և պարտականությունները: Սոցիոմետրիկ հարցում Դսարանի սոցիալ-հոգեբանական ախտորոշում | III շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 4. | Անկախության անգնահատելի դերն ինձ համար | IV շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 5. | Իմ դպրոցի անմահ հերոսները: | V շաբաթ | Դասղեկ Աշակերտներ Հոգեբան |
| 6. | Իմ սիրելի ուսուցիչը | VI շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 7. | Ինքնազնահատական և ուրիշի կարծիք | VII շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 8. | «Իմ սուրբ քաղաք Էջմիածին» քաղաքի օր /դաս-միջոցառում | VIII շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 9. | Բանակցելու արվեստը | IX շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 10. | «Անհնարին ոչինչ չկա, կարևորը ցանկությունն է» մոտիվացնող դաս | X շաբաթ | Դասղեկ Աշակերտներ Հոգեբան |
| 11. | Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները | XI շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |

| | | | |
|---|---|---|---|
| 12. | Իմ սիրելի հերոսները: Ում կցանկանայի նմանվել: | XII շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 12. | Հաշմանդամության միջազգային օր | XIII շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 13. | Ինչ անել երկրաշարժի ժամանակ | XIV շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 14. | Իմ դրական և բացասական կողմեր: Ծուլության հաղթահարման միջոցներ | XV շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 15. | Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: | XVI շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |

# Դասղեկի ժամեր
# 2-րդ կիսամյակ

| Դասի համարը | Դասի թեման | Ժամկետ | Կատարողներ |
|---|---|---|---|
| 1. | Սուրբ Ծնունդ Ինչպես անցկացրեցի Ամանորը | I շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 2. | Հիշենք և պահպանենք մեր ազգային տոները | II շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 3 | Հայոց բանակի դերը մեր կյանքում | III շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 4. | Իմ սիրելի հայտնի մարդիկ | IV շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 5. | Ազնիվ և անկեղծ հարաբերություններ դասարանում | V շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 6. | Տյառնընդառաջ | VI շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 7. | Գիրք նվիրելու տոն Դաս- միջոցառում | VII շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 8. | Բարով ես եկել գարուն | VIII շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 9. | Իմ մայրիկը… Կնոջ դերը ընտանիքում | IX շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 10. | Աղջիկ-տղա հարաբերություններ | X շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |

| | | | |
|---|---|---|---|
| 11. | Ընկերությունն իմ կյանքում: Ինչպես ձեռք բերել ընկերներ: | XI շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 12. | Թմրամոլությունը չարիք է | XII շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 13. | Երկրներ, որտեղ կուզենայի լինել | XIII շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 14. | Եղեռնի հիշատակի օր | XIV շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 15. | Բուլլինգի դրսևորումը և դրա կանխարգելումը | XV շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 16 | Մայիս, հաղթանակների ամիս | XVI շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 17. | Ընտանիքի միջազգային օր | XVII շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 18 | Սոցիոմետրիկ հարցում<br>Դասարանի սոցիալ-հոգեբանական ախտորոշում<br>Արդյունքների ամփոփում | XVIII շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |
| 19. | Կիսամյակի ամփոփում | X IX շաբաթ | Դասղեկ Աշակերտներ |

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ

| Համար | Նախասիրական, առարկայական խմբակներ | Գեղարվեստական-երաժշտական խմբակներ | Մարզական խմբակներ | Այլ խմբակներ |
|---|---|---|---|---|
| 1 | Աբրահամյան Յուլիա | պար | | |
| 2 | Բեգլարյան Մանուշակ | | լող, ըմբշամարտ | անգլերեն |
| 3 | Գրիգորյան Մանե | | | անգլերեն |
| 4 | Եղիազարյան Յանե | պար | լող | մաթեմատիկա |
| 5 | Համբարձյան Վարազդատ | | բոքս | |
| 6 | Հովյան Անահիտ | | լող | մաթեմատիկա |
| 7 | Կարապետյան Յուլիա | կար ու ձև | | |
| 8 | Կարապետյան Լևոն | երգ | | ռոբոտաշինություն |
| 9 | Կարապետյան Վահագն | | | ռոբոտաշինություն |
| 10 | Կիրակոսյան Արամ | | ըմբշամարտ | |
| 11 | Հակոբյան Կարեն | | | |
| 12 | Հակոբյան Հրայր | | | |
| 13 | Հարությունյան Մելանյա | պար | | |
| 14 | Հովհաննիսյան Անի | պար | | ծրագրավորման դասընթացներ |
| 15 | Հովհաննիսյան Անի | | | |
| 16 | Ղազարյան Մարգրետ | նկարչություն | | |
| 17 | Զաքարյան Վլադիմիր | | | անգլերեն |
| 18 | Մկրտչյան Նինա | | | մաթեմատիկա |
| 19 | Մուրադյան Արտյոմ | | ըմբշամարտ | |
| 20 | Մուրադյան Մանե | պար | | մաթեմատիկա անգլերեն |
| 21 | Մուրադյան Անժելա | պար | | |
| 22 | Ներսեսյան Անի | | | անգլերեն |
| 23 | Ներսեսյան Միլա | | | |
| 24 | Պետրոսյան Հրաչ | | | անգլերեն մաթեմատիկա |
| 25 | Սահակյան Գայանե | պար | | |
| 26 | Սարգսյան Ռոբերտ | կիթառ | շախմատ | ծրագրավորման դասընթաց |
| 27 | Սաֆարյան Կարեն | | | |
| 28 | Տոնոյան Արտյոմ | | | |
| 29 | Մարկոսյան Մանե | | | |
| 30 | | | | |
| 31 | | | | |
| 32 | | | | |
| 33 | | | | |
| 34 | | | | |